ՆԵՅՄԸՐ

Bookmark

Luca Caioli

NEYMAR

The Unstoppable Rise of PSG's Brazilian Superstar

Bookmark

Լուկա Կայոլի

ՆԵՅՄԱՐ

«Պարի Սեն Ժերմենի» բրազիլացի
գերաստղի անկասելի վերելքը

Թարգմանությունն անգլերենից՝
Լիանա Զաքարյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2019

Bookmark

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578
Կ 190

Կայոլի Լուկա
Կ 190 Նեյմար. «Պարի Սեն Ժերմենի» բրազիլացի գերաստղի անկասելի վերելքը/Լուկա Կայոլի/ Թարգմ. անգլ.՝ Լիանա Զաքարյանի.- Եր.: Նյու Մեգ, 2019.- 440 էջ:

Նեյմարն ամենաերիտասարդ բրազիլացի ֆուտբոլիստն է, որը միջազգային մրցաշարերում դարձել է 60 գոլի հեղինակ: Ժամանակն աշխատում է նրա օգտին, ու նա մոտենում է Պելեի 77 գոլերի ռեկորդին, որը երկար ժամանակ ոչ ոք չի կարողացել գերազանցել: ՊՍԺ-ի հրաշամանուկը 22 տարեկանում արդեն հասցրել է Բրազիլիայի հավաքականում ավելի շատ գոլերի հեղինակ դառնալ, քան Ռիվալդոն ու Ժաիրզինյոն իրենց ամբողջ ֆուտբոլային կարիերայի ընթացքում:

Լուկա Կայոլին՝ Մեսսիի և Ռոնալդուի մասին սպորտային բեսթսելլերների հեղինակը, պատմում է Նեյմարի անկասելի առաջխաղացման մասին՝ բացառիկ ու ուղիղ կապ հաստատելով նրա ընկերների, ընտանիքի, մարզիչների, թիմակիցների և երկրպագուների հետ:

Գրքի լրամշակված տարբերակը պատմում է Աշխարհի գավաթի խաղարկությունների ժամանակ ֆուտբոլի նորագույն աստղի ապշեցուցիչ ելույթների, Բրազիլիայի հավաքականի պարտության, որում, թերևս, մեծ դեր է խաղացել Նեյմարի՝ վնասվածքներով պարտադրված բացակայությունը, և «Պարի Սեն Ժերմեն» տրանսֆերի մասին:

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578

ISBN 978-9939-9196-7-6
Նեյմար. ՊՍԺ-ի բրազիլացի գերաստղի անկասելի վերելքը © 2019, «Նյու Մեգ» ՍՊԸ
Neymar: The Unstoppable Rise of PSG's Brazilian Superstar © 2018 by Luca Caioli.
All rights reserved
Շապիկի լուսանկարը՝ © Michael Regan /FIFA/Gettyimages.ru

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «ԱՐԻ» գրական գործակալության միջոցով:

ՆԱԽԱԳԾԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

TOTO GAMING

Չեմպիոնական հարթակ

Bookmark

www.totogaming.am

Ինչու է պետք կարդալ այս գիրքը

Երբ սկսեք կարդալ այս գիրքը և ծանոթանալ Նեյմարի հետ, հաշվի առեք՝ Նեյմարը միայն ֆուտբոլիստ չէ: Նա ժամանակակից ֆուտբոլային բրենդ է: Բրազիլացի ֆուտբոլիստը վաղուց դուրս է եկել «դասական» ֆուտբոլային աստղերի կարծրատիպերից: Նա սպորտային նոր սերնդի ներկայացուցիչն է: Նա հաջողակ է ոչ միայն և ոչ այնքան դաշտում, որքան դրանից դուրս:

Առաջին հայացքից Նեյմարն իր խաղաոճով բացասական կերպար է՝ ստադիոնում ոչ մի հանճարեղ բան չի անում, սիմուլյացիաներ է անում, շատ է ընկնում, քիչ վազում ու միաժամանակ աստղաբաշխական գումարներ վաստակում, թանկ մեքենաներ վարում ու ապրում գլամուրային այնպիսի կյանքով, որի մասին նույնիսկ Լեդի Գագան կերազեր:

Այս կարծիքը փշուր-փշուր է լինում գիրքն ընթերցելուց հետո: Լուկա Կայոլիի աշխատանքը բացահայտում է սպորտային մեգաաստղի հաջողության գաղտնիքը, ի ցույց դնում այն, ինչը չի երևում էկրանին ու նրա ինստագրամային հրապարակումներում: Նեյմարը հաջողության հասնում է քըրտնաջան աշխատանքի շնորհիվ՝ անցնելով վտանգավոր ձախողումների միջով, կենաց-մահու կռիվ մղելով դժկամների ու մրցակիցների հետ:

Ո՞րն է Նեյմարի հաջողության գրավականը: Անկասկած, ձգտումը: Բրազիլացու կյանքը նման է իր պես հարյուրավոր, անգամ հազարավոր հայրենակից ու ոչ միայն հայրենակից ֆուտբոլիստների կյանքին՝ աղքատ մանկություն, ծանր պայմաններ: Ու պատահական չէ, որ նրա ամենամեծ ցանկու-

թյունն էր դուրս գալ այդ անդունդից, հասնել հաջողության, փառքի արժանանալ:

Բոլորը գիտեն Նեյմարի՝ «Սանթոսի» հանդեպ տածած սիրո մասին: Սակայն քչերը գիտեն, որ բրազիլացի ֆուտբոլիստն իր ամբողջ կյանքով պարտական է «Տումիարու» ակումբին: Այս համեստ թիմի կազմում Նեյմարը հանդես չի եկել: Սակայն այն անջնջելի հետք է թողել ֆուտբոլիստի կյանքում...

«Դա նման է խանդոտ կնոջը: Եթե դրա հետ վարվես անզգուշորեն, ուշադրություն չդարձնես, կստանաս համարժեք պատասխան, անգամ ավելի մեծ ցավ կստանաս, քան կնոջից: Ահա ինչու սիրում եմ դա կյանքիցս առավել»,- մի առիթով ասել է Նեյմարը 2012-ին:

Նեյմարն աշխարհի ամենաքննարկվող դեմքը դարձավ 2011-ին. նրա մասին խոսում էին ամենուրեք: Սակայն նույնիսկ ակնարկ չկար, որ նա մի օր կհայտնվի ՊՍԺ-ում: Փարիզցիները 1971-ին մեծ շուքով վերադարձան ֆրանսիական ֆուտբոլի էլիտա ու սկսեցին բրազիլացիներին թիմ հրավիրելու պատմությունը:

Մոլորակի լավագույն ֆուտբոլիստ Պելեն հենց 1971-ին պետք է ժամաներ սիրո մայրաքաղաք: Դրա մասին անգամ մամուլն էր գրում, սակայն վերջին պահին ֆուտբոլի արքան որոշեց ընտանիքի հետ մնալ հայրենիքում ու չհեռանալ «Սանթոսից»:

Այս 40 տարվա ընթացքում ՊՍԺ-ն ունեցել է տարբեր սեփականատերեր, վարել տրանսֆերային տարատեսակ քաղաքականություն: Փարիզը գրավելու հույսով եկել ու գնացել են շատ անվանի բրազիլացիներ՝ Ռիկարդո Գոմես, Ռայ, Լեոնարդո: Գլխավոր հերոսը եղավ Ռոնալդինյոն: «Կախարդը» ՊՍԺ-ում պարզապես անում էր այն, ինչ ֆուտբոլային աշխարհը չէր

տեսել: Սակայն դա էլ բավական չէր, գույն չկար: Բրազիլական «գաղութը»՝ հանձինս Դավիդ Լուիսի, Լուկաս Մոուրայի, Տիագո Սիլվայի ու մյուսների, ևս չէր ստեղծում այն պատկերը, որը ցանկանում էին շեյխերը:

Նեյմարի տրանսֆերը պայթեցրեց տրանսֆերային պատուհանը: Բայց արժեր, անկասկած: Հենց Նեյմարը պետք է դառնար Փարիզի միակ ու անկրկնելի արքան: Ի վերջո, ինչո՞ւ պետք է ՊՍԺ երկրպագուներն ավելի շատ սիրեն Նեյմարին, քան մյուս բրազիլացիներին (Ռոնիին ներառյալ): Որովհետև «Ոսկե գնդակ» նվաճելու համար Ռոնալդինյոն հեռացավ «Բարսելոնա», իսկ Նեյմարը հանուն իր կյանքի գլխավոր նպատակի կատարեց հակառակ քայլը:

Ժամանակակից ֆուտբոլի ամենաթանկ ֆուտբոլիստի անցած ճանապարհը կանաչ չի եղել: Եվ եթե բացասական կարծիք ունեք Նեյմարի մասին, այս գրքի օգնությամբ գուցե փոխեք այն, մտնեք ֆուտբոլիստի մաշկի մեջ, ամենապատասխանատու պահերին նրա հետ կարևոր որոշում կայացնեք ու անձամբ զգաք նրա ապրումները:

Ռոբերտ Գասպարյան
Ֆուտբոլային մեկնաբան

Բովանդակություն

Գլուխ 1 –	Չարլզ Միլերի անվան հրապարակը	12
Գլուխ 2 –	Պոեզիա և արձակ	26
Գլուխ 3 –	Մոժի դաս Կրուզիս	36
Գլուխ 4 –	Սան Վիսենտի	53
Գլուխ 5 –	Պրայա Գրանդի	64
Գլուխ 6 –	Հիսուսն ինձ հետ է	76
Գլուխ 7 –	Սան Պաուլո միջնակարգ դպրոց	84
Գլուխ 8 –	Սանթոս	95
Գլուխ 9 –	Ձկներ	107
Գլուխ 10 –	Մադրիդ	117
Գլուխ 11 –	Կոպինյա	128
Գլուխ 12 –	«Պակաեմբու» ստադիոն	137
Գլուխ 13 –	Բարոկկո և մինիմալիզմ	147
Գլուխ 14 –	Ձվարձանքի ժամանակը	154
Գլուխ 15 –	Այրտոն Սեննա	166
Գլուխ 16 –	Հրեշ	177
Գլուխ 17 –	Բիթլամանիա	186
Գլուխ 18 –	Դոհա	192
Գլուխ 19 –	2011	202

Bookmark

Գլուխ 20 - Հանպատրաստից ստեղծագործելու շնորհը 228
Գլուխ 21 - Ռիմեյք 237
Գլուխ 22 - Շնորհակալություն բոլորին
ամեն ինչի համար 248
Գլուխ 23 - NJR 263
Գլուխ 24 - Յուրահատուկ օր 272
Գլուխ 25 - Մարականա 284
Գլուխ 26 - Բարսելոնա 301
Գլուխ 27 - Սատանան 317
Գլուխ 28 - Մինեյրասո 331
Գլուխ 29 - 100 տոկոս «Բարսելոնա» 346
Գլուխ 30 - Հաստատում 368
Գլուխ 31 - 99 տոկոս հավատ 390
Գլուխ 32 - Արքան Փարիզում 406
Կարիերա 426
Գրականություն 429
Երախտիքի խոսք 434

Bookmark

ԳԼՈՒԽ 1

Չարլզ Միլերի անվան հրապարակը

Ոլորած երկար բեղեր, ճակատին՝ անհնազանդ մազափունջ, սպիտակ վերնաշապիկ ու սև կիսավարտիք, ձեռքերում՝ ամուր սեղմած ֆուտբոլի գնդակ. վաղեմի այս լուսանկարները, որոնք արվել են դեռևս մագնեզիումի բռնկումով, պատկերում են Չարլզ Ուիլիամ Միլերին:

Չարլին ծնվել է 1874 թ. նոյեմբերի 24-ին Սան Պաուլո քաղաքի Բրաս թաղամասում: Նրա հայրը՝ Ջոնը, ծագումով շոտլանդացի էր, մասնագիտությամբ՝ ճարտարագետ: 3.000 այլ բրիտանացիների նման նա ևս հայտնվել էր Հարավային Ամերիկայում՝ երկաթուղու կառուցմանը մասնակցելու համար: Չարլիի մայրը՝ Կարլոտա Ֆոքսը, անգլիական արմատներով բրազիլուհի էր: Ինը տարեկանում Չարլիին ուղարկեցին Եվրոպա սովորելու, ինչպես այն ժամանակ ընդունված էր բարձր հասարակությունում: Սկզբում նա հաճախում էր

Սաութհեմփթոնի «Բանիստեր» դպրոցը, ապա ուսումը շարունակեց Հեմփշիրի միջնակարգ դպրոցում:

«Բանիստեր» մասնավոր դպրոցը հիմնադրել էր քահանա Ջորջ Էլաբին «Փենինսուլար» նավագնացության ընկերության նավապետների որդիների համար: Միլերի ուսանելու տարիներին դպրոցի տնօրենը քահանա Էլաբիի որդի, ֆուտբոլի մոլի երկրպագու Քրիստոֆեր Էլաբին էր:

«Հիասքանչ խաղի»[1] կանոնները 1863-ին ձևակերպել է ֆուտբոլի աշխարհում առաջին ասոցիացիան՝ Անգլիայի ազգային ֆեդերացիան: Օքսֆորդում ուսանելու տարիներին Էլաբին քոլեջի թիմի ավագն էր: Ոգևորությամբ նա վարակում էր բոլոր թիմակիցներին:

Չարլզ Միլերը լավ մարզիկ էր և շուտով դարձավ դպրոցի հավաքականի ավագը: Մանկական բարետես դեմքի ու նրբակազմ մարմնի համար նրան կնքել էին Մանչուկ մականունով: Չնայած կազմվածքին, գերազանց էր խաղում կենտրոնական հարձակվողի, երբեմն էլ ձախ եզրայինի դիրքերում: «Նա մեր ամենալավ հարձակվողն է: Արագաշարժ է, գերազանց դրիբլինգի ու թնդանոթային հարվածների է տիրապետում: Գոլերը նրան շատ հեշտ են տրվում»,- դպրոցական թերթն այսպես էր նկարագրում Միլերին: Վկայությունը «Բանիստերի» կազմում 34 խաղում նրա խփած 41 գոլերն են, ինչպես նաև Սուրբ Աստվածածին եկեղեցու Անգլիայի երիտասարդական միության կազմում 13 խաղում 3 գոլերը: Այս միությունը հետագայում վերաճեց Պրեմիեր լիգայում[2]

[1] The Beautiful Game - այսպես են անվանում ֆուտբոլը: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

[2] Անգլիայի բարձրագույն լիգայի անվանումն է:

հանդես եկող «Սաութհեմփթոն» ակումբի: Միլերը թեթև, միաժամանակ փոքր-ինչ հանդուգն խաղաոճ ուներ: Նա հիանալի երևակայություն ուներ, հոյակապ վերահսկում էր գնդակը և այնպիսի խաբսեր տալիս, որ մրցակիցները մնում էին մոլորված: 17 տարեկանում նրան հրավիրեցին Լոնդոնի «Կորինտիան» ակումբ: Այստեղ խաղում էին բրիտանական դպրոցների և համալսարանների լավագույն ֆուտբոլիստները, որոնք ձգտում էին վերացնել շոտլանդական թիմերի այն ժամանակվա գերակայությունը: Այդ թիմի պատվին տարիներ անց Միլերի խորհրդով «Կորինտիանս» անվանակոչվեց Սան Պաուլոյի ամենահայտնի ակումբներից մեկը:

1894-ին ուսումն ավարտելուց հետո Չարլին վերադարձավ Բրազիլիա: Ճամպրուկում տեղավորել էր թիմակցից նվեր ստացած 2 գնդակ, որոնք արտադրվել էին Լիվերպուլում, օդային պոմպ գնդակները փչելու համար, մի զույգ մարզակոշիկ, «Բանիստեր» դպրոցի և Սուրբ Աստվածածին եկեղեցու թիմերի մարզաշապիկները, ինչպես նաև ֆուտբոլի ասոցիացիայի կանոնների ու օրենքների մեծահատոր գիրքը: Պատմում են, որ նա մարզումները չէր դադարեցրել անգամ նավի վրա՝ տախտակամածին գնդակով շրջանցելով ուղևորներին և հանդիպող այլ խոչընդոտները: Փետրվարի 18-ին Չարլին ժամանեց Սանթոս: Հոր այն հարցին, թե ինչ է բերել Անգլիայից, պատասխանեց. «Գիտական աստիճան: Քո որդին գերազանց գնահատականներով է ավարտել ֆուտբոլի դպրոցը»:

Անգլիական ծագումով 20-ամյա բրազիլացին սկսեց աշխատել Սան Պաուլոյի երկաթուղային ընկերությունում, հոր մոտ: Ընդունվեց «Սան Պաուլոյի Ատլետիկ» ակումբ, որը 1888-ին հիմնադրել էին բրիտանացի ներգաղթյալները: Սակայն ակում-

բում նախընտրում էին ոչ թե ֆուտբոլ, այլ կրիկետ խաղալ: Ֆուտբոլ խաղալ, անշուշտ, կարողանում էին, բայց ոչ առանձնակի հետաքրքրությամբ, մինչև որ հայտնվեց Չարլզ Միլերը:

Ակումբում Միլերն իր ընկերներին, գործընկերներին, Սան Պաուլոյի Գազի ընկերության ու լոնդոնյան բանկի ներկայացուցչության բարձրաստիճան պաշտոնյաներին բացատրում էր խաղի կանոններն ու հիմնական տերմինները, ինչպես օրինակ՝ «խաղակես», «անկյունային հարված», «կիսադաշտ», «11-մետրանոց հարված»: Ժամանակի ընթացքում նրան հաջողվեց հետևորդների խումբ ստեղծել և համոզեց նրանց մարզվել «Վարզեա դու Կարմու» ստադիոնում: Մարզումները միանգամից մեծ հետաքրքրություն առաջացրեցին: Ահա թե այս մասին ինչ է գրել Սելսու դե Արաուժոն Ռիո դե Ժանեյրոյի իր լրագրող ընկերոջն ուղղած նամակում. «Բոմ Ռետիրու թաղամասի մոտ մի խումբ անգլիացիներ միայն իրենց բնորոշ խելահեղությամբ դաշտով մեկ ոտքով աջ ու ձախ են տշում կովի միզապարկ հիշեցնող ինչ-որ բան: Համենայն դեպս, այս զբաղմունքը մեծ ուրախություն է պատճառում մի խմբին և մեծ ցավ՝ մյուսին, երբ այդ դեղնավուն գունդն անցնում է փայտյա ձողերով սարքած ուղղանկյան միջով»:

Չնայած տիրող թերահավատությանը, ֆուտբոլը սկսում է տարածվել բրիտանական համայնքի ջենթլմենների շրջանում, և 1895-ի ապրիլի 14-ին Միլերին հաջողվում է ֆուտբոլային լիարժեք հանդիպում կազմակերպել: «Վարզեա դու Կարմու» ստադիոնում այդ օրն իրար դեմ դուրս եկավ բրազիլացիներից և անգլիացիներից կազմված երկու թիմ, որոնք ներկայացնում էին Սան Պաուլոյի Երկաթուղու և Գազի ընկերությունները: Միլերի գլխավորությամբ, որը 2 գոլ խփեց, «երկաթուղայինները»